# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հուլիսի 2013թվականի N 118-Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի 2013թ. բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին
Զեկ. Ա. Սանթրոսյան
2. Դիլիջանի քաղաքային համայնքի 2013թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
Զեկ. Ա. Սանթրոսյան
3. Դիլիջանի քաղաքային համայնքի 2013թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
Զեկ. Ա. Սանթրոսյան
4. Դիլիջանի քաղաքային համայնքի 2013թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
Զեկ. Ա. Սանթրոսյան
5. Դիլիջանի քաղաքային համայնքի 2013թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
Զեկ. Ա. Սանթրոսյան
6. Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող «բնակավայրերի հողերից» 3882.0 ք.մ. մակերեսով հողամաս աճուրդի և 150.0 ք.մ. մակերեսով հողամասը կրկնաճուրդի միջոցով օտարելու թույլատվություն տալու, ինչպես նաև մեկնարկային գները հաստատելու մասին
Զեկ. Ա. Սանթրոսյան
7. Դիլիջանի Մյասնիկյան փողոցի թիվ 76/10 հասցեի ավտոտնակը և վերջինիս սպասարկման 28.1 ք.մ. հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին
Զեկ. Ա. Սանթրոսյան
8. Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 1103.3 ք.մ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2013թվականի N 119-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ. ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 69 հոդվածով , համայնքի ղեկավարը բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին հաղորդում է ներկայացրել համայնքի ավագանուն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Ընդունել ի գիտություն Դիլիջանի քաղաքային համայնքի բյուջեի 2013թ.երկրորդ եռամսյակի եկամուտների կատարողականը /հատված թիվ 1/
2. Ընդունել ի գիտություն Դիլիջանի քաղաքային համայնքի բյուջեի 2013թ. երկրորդ եռամսյակի ծախսերի կատարողականը /հատված թիվ 2/

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ
6. ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ
7. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ
8. ՍԱՀԱԿՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(01.01. 2013թ. - 01.07.2013թ. ժամանակահատվածի համար)

| Եկամտատեսակները | Տարեկան ծրագիր | | | LI եռամսյակի ծրագիր | | | Փաստացի | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը (ս.11+ս.12) | այդ թվում` վարչական մաս | այդ թվում` ֆոնդային մաս | Ընդամենը (ս.5+ս.6) | այդ թվում` վարչական մաս | այդ թվում` ֆոնդային մաս | Ընդամենը (ս.8+ս.9) | այդ թվում` վարչական մաս | այդ թվում` ֆոնդային մաս |
| 2 | 10 | 11 | 12 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 339,787.5 | 337,787.5 | 2,000.0 | 163,981.4 | 161,981.4 | 2,000.0 | 119,782.1 | 138,722.8 | 0.0 |
| այդ թվում` 1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ | 97,706.6 | 97,706.6 | X | 43,314.4 | 43,314.4 | X | 30,665.5 | 28,785.2 | X |
| 1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից | 47,645.1 | 47,645.1 | X | 22,758.4 | 22,758.4 | X | 11,178.4 | 11,178.4 | X |
| Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար | 17,840.7 | 17,840.7 | X | 10,730.2 | 10,730.2 | X | 5,276.1 | 5,276.1 | X |
| Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | 29,804.4 | 29,804.4 | X | 12,028.2 | 12,028.2 | X | 5,902.3 | 5,902.3 | X |
| 1.2 Գույքային հարկեր այլ գույքից | 28,788.5 | 28,788.5 | X | 10,000.0 | 10,000.0 | X | 9,953.3 | 9,953.3 | X |
| Գույքահարկ փոխադրամիջոցների համար | 28,788.5 | 28,788.5 | X | 10,000.0 | 10,000.0 | X | 9,953.3 | 9,953.3 | X |
| 1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ | 16,673.0 | 16,673.0 | X | 8,456.0 | 8,456.0 | X | 7,653.5 | 5,773.2 | X |
| այդ թվում` Տեղական տուրքեր | 16,673.0 | 16,673.0 | X | 8,456.0 | 8,456.0 | X | 7,653.5 | 5,773.2 | X |
| այդ թվում`ա) Համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար | 3,000.0 | 3,000.0 | X | 1,515.0 | 1,515.0 | X | 500.0 | 500.0 | X |
| որից` աա) Հիմնական շինությունների համար | 3,000.0 | 3,000.0 | X | 1,515.0 | 1,515.0 | X | 500.0 | 500.0 | X |
| աբ) Ոչ հիմնական շինությունների համար | 0.0 | | X | 0.0 | | X | 0.0 | | X |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| բ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքներ (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) կատարելու թույլտվության համար | 50.0 | 50.0 | X | 30.0 | 30.0 | X | 0.0 | | X |
| գ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար | 10.0 | 10.0 | X | 10.0 | 10.0 | X | 15.0 | 15.0 | X |
| դ) Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար | 4,000.0 | 4,000.0 | X | 2,000.0 | 2,000.0 | X | 1,675.0 | 1,675.0 | X |
| ե) Համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմ. թույլտվության համար | 63.0 | 63.0 | X | 21.0 | 21.0 | X | 47.3 | 47.3 | X |
| զ) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար | 1,050.0 | 1,050.0 | X | 600.0 | 600.0 | X | 900.0 | 900.0 | X |
| ը) Համաքաղաքային կանոններին համապատասխան Երևան քաղաքի և քաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար | 300.0 | 300.0 | X | 150.0 | 150.0 | X | 30.0 | 30.0 | X |
| թ) Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար | 8,000.0 | 8,000.0 | X | 4,000.0 | 4,000.0 | X | 2,520.9 | 2,520.9 | X |
| ժ) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար | 100.0 | 100.0 | X | 30.0 | 30.0 | X | 35.0 | 35.0 | X |
| ժբ) Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար | 100.0 | 100.0 | X | 100.0 | 100.0 | X | 50.0 | 50.0 | X |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1.4 Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ | 4,600.0 | 4,600.0 | X | 2,100.0 | 2,100.0 | X | 1,880.3 | 1,880.3 | X |
| այդ թվում՝Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր | 4,600.0 | 4,600.0 | X | 2,100.0 | 2,100.0 | X | 1,880.3 | 1,880.3 | X |
| այդ թվում՝ա) Քաղաքացիական կացության ակտեր գրանցելու համար | 1,400.0 | 1,400.0 | X | 600.0 | 600.0 | X | 646.0 | 646.0 | X |
| բ) Նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու համար | 3,200.0 | 3,200.0 | X | 1,500.0 | 1,500.0 | X | 1,234.3 | 1,234.3 | X |
| **2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ** | **176,368.6** | **174,368.6** | **2,000.0** | **89,116.6** | **87,116.6** | **2,000.0** | **87,116.6** | **87,116.6** | 0.0 |
| **2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից** | **174,368.6** | **174,368.6** | X | **87,116.6** | **87,116.6** | X | **87,116.6** | **87,116.6** | 0.0 |
| որից՝ Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 172,110.3 | 172,110.3 | X | 86,055.2 | 86,055.2 | X | 86,055.2 | 86,055.2 | X |
| գ) Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ | 2,258.3 | 2,258.3 | X | 1,061.4 | 1,061.4 | X | 1,061.4 | 1,061.4 | X |
| 2.6 Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից | 2,000.0 | X | 2,000.0 | 2,000.0 | X | 2,000.0 | 2,000.0 | 2,000.0 | X |
| ա) Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավոր-ման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | 2,000.0 | X | 2,000.0 | 2,000.0 | X | 2,000.0 | 2,000.0 | **2,000.0** | 0.0 |
| **3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ** | **65,712.3** | **65,712.3** | **0.0** | **31,550.4** | **31,550.4** | **0.0** | **22,821.0** | **22,821.0** | X |
| **այդ թվում՝3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ** | **26,000.0** | **26,000.0** | X | **13,796.0** | **13,796.0** | X | 9,679.2 | 9,679.2 | X |
| այդ թվում՝ Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | 10,000.0 | 10,000.0 | X | 5,300.0 | 5,300.0 | X | 3,193.2 | 3,193.2 | X |
| Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփ. պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ | 8,000.0 | 8,000.0 | X | 3,500.0 | 3,500.0 | X | 1,810.2 | 1,810.2 | X |
| Այլ գույքի վարձակալությունից մուտքեր | 8,000.0 | 8,000.0 | X | 4,996.0 | 4,996.0 | X | 4,675.8 | 4,675.8 | X |
| 3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից | 1,787.5 | 1,787.5 | X | 804.4 | 804.4 | X | **804.4** | **804.4** | X |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազ-րությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ | 1,787.5 | 1,787.5 | X | 804.4 | 804.4 | X | 804.4 | 804.4 | X |
| **3.5 Վարչական գանձումներ** | **37,500.0** | **37,500.0** | **X** | **16,750.0** | **16,750.0** | **X** | **11,655.9** | **11,655.9** | X |
| այդ թվում՝ Տեղական վճարներ | 34,500.0 | 34,500.0 | X | 15,250.0 | 15,250.0 | X | 803.4 | 10,852.5 | X |
| Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ | 3,000.0 | 3,000.0 | X | 1,500.0 | 1,500.0 | X | 803.4 | 803.4 | X |
| **3.6 Մուտքեր տույժերից, տուգանքներից** | **424.8** | **424.8** | **X** | **200.0** | **200.0** | **X** | 681.5 | 681.5 | X |
| ա/ք՝Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ | 424.8 | 424.8 | X | 200.0 | 200.0 | X | 681.5 | 681.5 | X |

*Համայնքի ղեկավար* [signature] *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

*ֆինանսական բաժնի պետ* [signature] *Գ.ԴԱՎԹՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2013թվականի N 120-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան են դիմել քաղաքի Աղայան փողոցի բնակիչները հայտնելով, որ Աղայան փողոցի թիվ 4 հասցեի տան հարակից հենապատը մասամբ փլվել է և անհրաժեշտ է այն վերակառուցել:

Ուսումնասիրությունից պարզվել է , որ նշված հենապատը տարիների ընթացքում ենթարկվել է ֆիզիկական մաշվածության, փլվածքները լցվել են փողոց, ինչը խոչընդոտ է առաջացնում ավտոտրանսպորտի և հետիոտնի անվտանգ երթևեկության համար: Կարճ ժամկետում վթարված հենապատը վերակառուցելու նպատակով համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կատարել հենապատի վերակառուցման աշխատանքների գնում:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով` համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի Աղայան փողոցի թիվ 4 հասցեի տանը հարակից հենապատի վերակառուցում» աշխատանքների գնման նպատակով համայնքի 2013թ. բյուջեի ֆոնդային մասից «Ճանապարհային տրանսպորտ» /բաժին 04 , խումբ 05, դաս 01, հոդված 5113/ հատկացնել 1672800 դրամ:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ

6. ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ

7. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ

8. ՍԱՀԱԿՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2013թվականի N 121-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան են դիմել քաղաքի բնակիչները խնդրանքով վերանորոգելու քաղաքի ներհամայնքային նշանակության ավտոճանապարհները:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ Դիլիջան քաղաքի ներհամայնքային նշանակության Իվանովի,Օրջոնիկիձե,Շահումյան 3-րդ նրբ., ՈՒսանողական փողոցները և քաղաքային հիվանդանոցի հարակից տարածքը արտաքին ազդեցությունից մասամբ ենթարկվել են ֆիզիկական մաշվածության , տեղ տեղ առաջացել են խորը փոսեր՝ խոչընդոտ առաջացնելով հետիոտնի և ավտոտրանսպորտի կանոնավոր երթևեկությանը:

Նշված թերությունները վերացնելու նպատակով համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կազմակերպել փողոցների ավտոտրանսպորտի երթևեկելի մասի փոսային նորոգման աշխատանքների զնում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է .

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի ներհամայնքային նշանակության Իվանովի,Օրջոնիկիձե,Շահումյան 3-րդ նրբ., ՈՒսանողական փողոցները և քաղաքային հիվանդանոցի հարակից տարածքի ավտոտրանսպորտի երթևեկելի մասի փոսային նորոգում» աշխատանքների զնման նպատակով համայնքի 2013թ. բյուջեի ֆոնդային մասից «Ճանապարհային տրանսպորտ» /բաժին 04 , խումբ 05, դաս 01, հոդված 5113/ հատկացնել 10227640 դրամ:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2013թվականի N 122-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան են դիմել քաղաքի Ռիսանոդական փողոցի բնակիչները խնդրանքով վերանորոգելու քաղաքի ներհամայնքային նշանակության Ռիսանոդական փողոցից մինչ Սայաթ-Նովա փողոց հատման ավտոճանապարհը:

Ուսումնասիրությունից պարզվել է , որ նշված ճանապարհը տարիների ընթացքում արտաքին ազդեցությունից ենթարկվել է ֆիզիկական մաշվածության , առաջացել են խորը փոսեր, ինչը խանգարում է ավտոտրանսպորտի և հետիոտնի կանոնավոր և անվտանգ երթևեկությանը:

Նշված թերությունները վերացնելու նպատակով համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կազմակերպել փողոցների ավտոտրանսպորտի երթևեկելի մասի նորոգման աշխատանքների գնում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով` համայնքի ավագանին որոշում է

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի ներհամայնքային նշանակության Ռիսանոդական փողոց 2-րդ նրբ.թիվ 62 տնից մինչև Սայաթ-Նովա փողոց ավտոտրանսպորտի երթևեկելի մասի նորոգում» աշխատանքների գնման նպատակով համայնքի 2013թ. բյուջեի ֆոնդային մասից «Ճանապարհային տրանսպորտ» /բաժին 04 , խումբ 05, դաս 01, հոդված 5134/ հատկացնել 19961430 դրամ:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2013թվականի N 123-Ա

### ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան են դիմել քաղաքի Կամարինի փողոցի բնակիչները խնդրանքով վերանորոգելու քաղաքի Կամարինի փողոցի թիվ 25 հասցեի տանն հարակից հենապատը, ինչպես նաև կատարել Կամարինի փողոցի թիվ 1 տնից մինչև Կամարինի թիվ 19 տունն ընկած հատվածի ավտոտրանսպորտի երթևեկելի մասի փոսային նորոգում:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ նշված հենապատը մասամբ փլուզվել է, իսկ Կամարինի փողոցի թիվ 1 տնից մինչև Կամարինի թիվ 19 տուն ընկած հատվածը արտաքին ազդեցությունից մասամբ ենթարկվել է ֆիզիկական մաշվածության , առաջացել են խորը փոսեր, ինչը խանգարում է ավտոտրանսպորտի և հետիոտնի կանոնավոր և անվտանգ երթևեկությանը:

Նշված թերությունները վերացնելու նպատակով համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կազմակերպել փողոցների ավտոտրանսպորտի երթևեկելի մասի փոսային նորոգման աշխատանքների գնում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է .

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի Կամարինի փողոցի թիվ 25 հասցեի տանն հարակից հենապատի վերակառուցման և Կամարինի փողոցի թիվ 1 տնից մինչև Կամարինի թիվ 19 տունն ընկած հատվածի ավտոտրանսպորտի երթևեկելի մասի փոսային նորոգում» աշխատանքների գնման նպատակով համայնքի 2013թ. բյուջեի ֆոնդային մասից «Ճանապարհային տրանսպորտ» /բաժին 04 , խումբ 05, դաս 01, հոդված 5113/ հատկացնել 8595210 դրամ:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հուլիսի 2013թվականի N 124-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ "ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ" 3882.0ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 2 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԻ ԵՎ 150.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԿՐԿՆԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի 2013թ. հուլիսի 12-ի թիվ 285-Ա որոշման համաձայն՝ համայնքի ավագանու քննարկմանն էր ներկայացվել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող "Բնակավայրերի հողերից" 3882.0քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը աճուրդի և 150.0քմ մակերեսով հողամասը կրկնաճուրդի միջոցով օտարելու թույլատվություն տալու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված աճուրդային լոտերով, մակերեսներով, պայմաններով և մեկնարկային գներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով, Դիլիջանի քաղաքային համայնքի գլխավոր հատակագծին և գոտիավորման սխեմային համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող "Բնակավայրերի հողերից" 3882.0քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը աճուրդի և 150.0քմ մակերեսով հողամասը կրկնաճուրդի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գները՝ համաձայն կից աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

Աղյուսակ.

ՀՀ Դիլիջանի համայնքի ավագանու 2013թ.
15.07-ի թիվ 124-Ա որոշման

# Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող հողերի աճուրդ-վաճառք

| Լոտ | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Օգտագործման նպատակը | Մեկնարկային գին | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Լոտ 33/ՔՀ-13/ | Սարալանջի 6-րդ նրբ. 15 | 053-252 | 662,0 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | անհատական բնակելի տան կառուցման | 1 655 000 | չկան |
| Լոտ 34/ՔՀ-13/ | Մյասնիկյան 52/2 | 0310-0095 | 3 220,0 | Բնակավայրերի հող | հասարակական կառուցապատման | դպրոցի սպասարկման | 8 050 000 | չկան |
| Լոտ 22/ՔՀ-13/ կրկնաճուրդ | Թբիլիսյան խճուղի 17/3 | 0045-0031 | 150,0 | Բնակավայրերի հող | հասարակական կառուցապատման | հասարակական նշանակության օբյեկտի կառուցման | 375 000 | չկան |

*Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար* *Ա. Մարտիրոսյան*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2013թվականի N 125-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 76/10 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ 28.1ՔՄ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2013թ. հունիսի 26-ի թիվ 269-Ա որոշմամբ, քաղ. Անահիտ Շահբազյանի կողմից Մյասնիկյան փողոցի թիվ 76/10 հասցեում ինքնակամ կառուցված 28.1քմ մակերեսով ավտոտնակի /հաշվարկված է արտաքին չափերով/ նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփ. վկայական՝ թիվ 10072013-11-0014/:

Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղաքացուն՝ վերոհիշյալ ինքնակամ շինությունը ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:

Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, վերոհիշյալ 28.1քմ մակերեսով ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 28.1քմ մակերեսով հողամասն օտարել քաղ. Անահիտ Շահբազյանին, համապատասխանաբար, 47770 դրամ և 53784 դրամ արժեքներով:

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն Մյասնիկյան փողոցի թիվ 76/10 հասցեում գտնվող ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 28.1քմ հողամասը, համապատասխանաբար, 47770 դրամ և 53784 դրամ արժեքներով, քաղ. Անահիտ Շահբազյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ -8      Դեմ -0      Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հուլիսի 2013թվականի N 126-Ա

## ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ "ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ" 1103.3ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 3 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2013թ. հուլիսի 12-ի թիվ 284-Ա որոշման համաձայն՝ համայնքի ավագանու քննարկմանն էր ներկայացվել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող "Բնակավայրերի հողերից" 1103.3քմ ընդհանուր մակերեսով թվով 3 հողամասերը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլատվություն տալու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված մրցութային լոտերով, պայմաններով և մեկնարկային գներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի, "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով, Դիլիջան համայնքի գլխավոր հատակագծին և գոտիավորման սխեմային համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել համայնքի ղեկավարին Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող "Բնակավայրերի հողերից" 1103.3քմ ընդհանուր մակերեսով, թվով 3 հողամասերը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրել և հաստատել մեկնարկային գները՝ համաձայն աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

Առդասակ.
Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու 2013թ.
15.07 թիվ 125-Ա որոշման

| Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող հողերի կառուցապատման իրավունքի մրցույթ | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/հ | Լոտ | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Օգտագործման նպատակը | Հողամասի տրամադրման ժամկետը | Կառուցապատման իրավունքի տարեկան վճարի մեկնարկային գին | Սահմանափակումներ |
| 1 | Լոտ 4/ՔԿ-13/ | Կալինինի 235/6 | [illegible] | 35,3 | Բնակավայրերի հող | հասարակական կառուցապատման | առևտրի սրահի կառուցման | մինչև 2030թ. դեկտեմբերի 31-ը | 25 000 դրամ | չկան |
| 2 | Լոտ 5/ՔԿ-13/ | Թբիլիսյան խճուղի 7/3 | 0047-[illegible] | 430,0 | Բնակավայրերի հող | հասարակական կառուցապատման | հասարակական նշանակության օբյեկտի կառուցման | մինչև 2030թ. դեկտեմբերի 31-ը | 30 000 դրամ | չկան |
| 3 | Լոտ 6/ՔԿ-13/ | Պարզ լճի 18/3 | 0674-0022 | 638,0 | Բնակավայրերի հող | հասարակական կառուցապատման | հասարակական նշանակության օբյեկտի կառուցման | մինչև 2030թ. դեկտեմբերի 31-ը | 35 000 դրամ | չկան |

*Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար* *Ե.Մարտիրոսյան*

1 103,3